## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ԳԵՂԱԴԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ/ՊԱՅՄԱՆՆԵՐ/

## 2026թ.

## Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մշակել Ծաղկահովիտ համայնքի Գեղադիր բնակավայրի մշակույթի տան հիմնանորգման աշխատանքների նախագիծ:

**1. Կիրառման ոլորտ**

Սույնով նախատեսված է ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտ խոշորացված համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի մշակույթի տան հիմնանորգման աշխատանքների կատարման նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերի պատվիրման, ծախսերի գնահատման և տեխնիկական բնութագրի կազմման համար: Այն նպատակ ունի համայնքներին տրամադրվող սուբվենցիայի ծրագրի իրականացման շնորհիվ բարելավել համայնքի բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակը, որը էապես կփոխի համայնքի արտաքին տեսքը և բնակիչների մշակութային կյանքը:

**2. Համառոտ նկարագիրը**

Գեղադիր բնակավայրի մշակույթի տան շենքը գտնվում է անմխիթար վիճակում, կառուցումից հետո մինչև օրս այն չի վերանորոգվել: Հաշվի առնելով համայնքի զարգացման առաջնահերթությունները և բնակչության մշակութային կյանքը ակտիվացնելու անհրաժեշտությունը որոշվել է նախաձեռնել մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքներ:

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պետք է իրականացվեն հետևյալ աշխատանքները՝

-Ապամոնտաժել կառույցի տանիքը, պատերը ուժեղացնել ներսից ամրանավորված տոկրետ սվաղով, սկսած հիմքերից, նախօրոք ճաքերը պոլիմերացեմենքային լուծույթով, ընդգրկելով առկա պատերի բացվածքները պողպատե տարրերից շրջակալմամբ:
-Վերականգնել արտաքին պատաշարվածքի վնասված տեղամասերը:
-Վերնածածկի մերկացած ամրաններով-տեղամասերը մաքրել ժանգից, երեսապատել հակակոռոզիոն պատվածքով և սվաղել ցեմենտավազային շաղախով:

-Վերականգնել շենքի տանիքը

- Շենքում կատարել ընդհանուր նորոգման աշխատանքներ
- Շենքի շուրջ իրականացնել կանոնակարգված ջրահեռացման նոր սալվածք:
- կառուցել ջեռուցման, գազամատակարարման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր:

-Իրականացնել Էլեկտրական հոսանքի մոնտաժման, Հակահրդեհային պաշտպանության ապահովման աշխատանքներ:

**3. Կատարման ենթակա աշխատանքների համառոտ նկարագրությունը**

Մշակույթի տան վերանորոգման աշխատանքները իրականացնելիս պետք է հաշվի առնվեն տարածաշրջանի կլիմայական պայմանները: Դրանից ելնելով պետք է՝ շենքի տանիքի կառուցվածքը իրականացնել ամուր շինանյութից:

***Մշակույթի տան հիմնանորգման աշխատանքների համար անհրաժեշտ է կատարել՝***

- Շինարարական աշխատանքներ

1. Մշակույթի տան տանիքի վերականգնում
2. Դռների, լուսամուտների փոխարինում
3. Պատերի նորոգում
4. Հատակի կառուցում
5. Լուսավորության անցկացում
6. Ջեռուցման անցկացում
7. Գազամատակարարում
8. Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի կառուցում
9. Էլեկտրական հոսանքի մոնտաժման աշխատանքների իրականացում
10. Հակահրդեհային պաշտպանության ապահովում

**Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ**

Հիմնավորում Համայնքի ղեկավարի, պատվիրատուի պահանջներին համապատասխան Նորմատիվային պահանջներ՝

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ N102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04-2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերին,

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 14.01.2021թ N02-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 52-01-«Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» շինարարական նորմերին,

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 19.09.2022թ N22-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13-03-2022 «Կրող և պատող կոնստրուկցիաներ» շինարարական նորմերին,
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 10.12.2020թ. N95-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 31-03—2020 «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերին,

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.03.2014թ N87-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20-06-2014 Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» շինարարական նորմերին,
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 04.04.2022թ N06-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 31-03.02-2022 Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ» շինարարական նորմերին,

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 20.05.2022թ N10-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04-2022 «Տանիքներ և տանիքածածկեր» շինարարական նորմերին,
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 08.07.2022թ N 16-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերին,

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 17.08.2022թ N 18-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 20-05-2022 «Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանությունը կոռոզիայից» շինարարական նորմերին,
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 26.08.2022թ N21-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» շինարարական նորմերին,
- ՀՀ կառավարության 19.03.2015թ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշմանը,
- ՀՀ կառավարության 16.02.2006թ «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» N 392-Ն որոշմանը:

**Համայնքի ղեկավար՝ Ն. Հակոբյան**

**16.03.2026թ.**